

Մարիաննա Արզումանյան  
Մեսրոպ Մաշտոց Համալսարան  
Արցախ

**Անտառային:** Հողվածում քննության է ենթարկվել Արցախի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես ներկայացուցչական օրենսդիր մարմին, նրա կառուցվածքը, կազմավորման կարգը և իրավասությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվել պատգամավորի կարգավիճակին ներկայացվող իրավական պահանջներին: Քննարկվել են պատգամավորական գործունեության երաշխիքները: Ընդգծվել է օրենսդրական նախաձեռնությունը՝ որպես պատգամավորական կարգավիճակի առանցք: Միաժամանակ ուսումնասիրվել են մի շարք պետությունների պառլամենտի ինստիտուտները և անցկացվել համապատասխան գուգահեռներ:

**Բանալի բառեր՝** Արցախի Հանրապետություն, Սահմանադրություն, Ազգային ժողով, պառլամենտարիզմ, օրենսդիր մարմին, պատգամավոր, ժողովրդավարություն, նստաշրջան, օրենսդրական նախաձեռնություն:

Ներկայումս ամբողջ աշխարհում դժվար է պատկերացնել պետություն առանց որոշակի օրենքների համակարգի, որոնք կոչված են կանոնակարգելու բազմաբովանդակ հասարակական հարաբերություններ՝ սահմանելով հասարակության և պետական իշխանության փոխհարաբերակցության բնույթը: Ժամանակակից պետությունների ճնշող մեծամասնության Սահմանադրություններով օրինաստեղծ գործունեությունը վերապահված է ընտրովի ներկայացուցչական մարմիններին, որոնք իմաստային ըմբռնման համար օգտագործում են հավաքական «պառլամենտ» տերմինը, որը բառացի թարգմանությամբ նշանակում է մարմին, որտեղ կարելի է խոսել կամ խորհել: Ի սկզբանե պառլամենտը, որպես պետաիրավական ինստիտուտ, ունի բազմադարյա պատմություն: Այն առաջին անգամ կազմավորվել է Անգլիայում՝ դեռևս 12-13-րդ դարերում: Սակայն պետք է ընդգծենք, որ ներկայիս պառլամենտները ինքնին հանդես են գալիս որպես բուրժուական հեղափոխությունների արդյունքի ծնունդ և որպես պետական իշխանության կարևորագույն մարմիններից մեկը, ձեռք են բերում մի շարք նոր բնորոշ գծեր, որոնց շնորհիվ կազմում են հասարակության պետական կառավարման յուրահատուկ համակարգ: Որպես կանոն օրենքների ընդունումը օրենսդիր մարմնի հիմնական և կարևոր գործառույթն է: Օրենսդրությունը միշտ էլ եղել է և շարունակում է մնալ հասարակության պետական կառավարման կարևոր և արդյունավետ գործիքը, որը ըստ էության շոշափում է կյանքի բոլոր հիմնական շերտերը և ոլորտները: Եվ պատահական չէ, որ ներկայումս օրենսդրական լուծումների ճշգրտությունը և օրենքների որակը Արցախում իրականացվող սոցիալական և քաղաքական միջոցառումների վճռորոշ գործոններից են: Այստեղ խնդրի էությունն այն է, թե ինչպես մշակել գրագետ օրենքներ, որպեսզի դրանցում ձևավորված վարքագծի կանոնները չմնան թղթի վրա, այլ կարողանան խորը ազդեցություն ունենալ հասարակական հարաբերությունների վրա: Նշված հիմնախնդրին սահմանադրականության համաշխարհային փորձը տալիս է հստակ պատասխան՝ օրենքները պետք է ընդունվեն սոցիալական արդարության հիման վրա, արտահայտեն հասարակության բոլոր անդամների կամքն ու շահերը՝ այսինքն օրենսդրության համակարգը պետք է հարաբերակցվի իրավունքի համակարգին ինչպես ձև և բովանդակությամբ: [6, էջ 21] Հենց այդ սկզբունքների պահպանմանը պետք է օրինաստեղծ պրակտիկայում միտված լինի ԱՀ ԱԺ-ի հիմնական քաղաքականությունը:

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը պայմանավորված է նրա կազմակերպման եղանակով: Նրա պատգամավորները ընտրվում են բնակչության կողմից համընդհանուր ընտրություններում: Ազգային ժողովի համաժողովրդական ընտրություններն ապահովում են նրա գործունեության մեջ բազմազան քաղաքական հայացքների, տարբեր սոցիալական շերտերի և խմբերի շահերի արտացոլումը: Ժողովրդի լիազոր ներկայացուցիչները, որոնք կոչված են արտահայտելու նրա ընդհանուր շահերը և առանձին մասերի կարծիքն ու շահերը, խորհրդարաններ

են դառնում ընտրությունների արդյունքում, որտեղ բնակչությունն իր վստահությունն է հայտնում նրանց, նրանց ծրագրերին և քաղաքական հայացքներին:

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը որոշ իմաստով դրսևորվում է նաև նրա պատգամավորների կազմով, որովհետև ԱԾ պատգամավորներ են ընտրվում տարբեր կրթության, մասնագիտության, սոցիալական, գույքային և այլ դրություն ունեցող քաղաքացիները: Վերջիններս փաստորեն ԱԾ-ում ներկայացնում են հանրապետության բնակչության տարբեր խմբերը:

ԱԾ-ի ներկայացուցչական բնույթը դրսևորվում է նաև նրա համար սահմանված լիազորությունների կոնկրետ ժամկետի մեջ, որի լրանալուց հետո անմիջապես անցկացվում են նոր ընտրություններ: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծվում խորհրդարանի կազմում ընտրել նոր պատգամավորներ, որոնք ի վիճակի են Ազգային ժողովի գործունեության ընթացքում հաշվի առնել երկրի կյանքում կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը և ավելի բարելավել նրա աշխատանքները: ԱԾ-ի հերթական ընտրություններ անցկացվում են Հանրապետության նախագահի ընտրությունների հետ միաժամանակ:

Ազգային ժողովը, լինելով ներկայացուցչական մարմին, միաժամանակ հանդես է գալիս որպես ներկայացուցչական ժողովրդական իշխանության կարևորագույն ինստիտուտ:

Պառլամենտի սահմանադրական կարգավիճակի ամրագրման վրա էական ազդեցություն ունեցավ իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ ըստ որի պառլամենտը հանդես է գալիս որպես անկախ, ինքնուրույն իշխանության ճյուղ:

Փաստորեն պառլամենտարիզմի հետագա զարգացումը պայմանավորված է պետության ժողովրդավարական բնույթով, քանի որ ինչպես վկայում է կոնստիտուցիոնալիզմի փորձը, պետական իշխանության ժողովրդավարական կազմակերպումը ենթադրում է, որ օրենսդիր իշխանության կրողը հանդես է գալիս պառլամենտը: Նշված դրույթը իր օրենսդրական ամրագրումն է ստացել նաև ԱՀ 2017թ. փետրվարի 20-ին համաժողովրդական քվեարկությամբ ընդունված Սահմանադրության մեջ: ԱՀ Սահմանադրության հինգերորդ և ՀՀ Սահմանադրության չորրորդ գլուխները նվիրված են բարձրագույն օրենսդիր մարմնի՝ ԱԾ-ի կազմակերպման և գործունեության հիմունքներին: ԱՀ ԱԾ-ի Սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրումն ու դրա հետ կապված առանձնահատկությունները ըստ էության պայմանավորված են Արցախի որդեգրած կառավարման ձևի առանձնահատկությամբ, որտեղ անշուշտ կարևորվում են ԱԾ-ի փոխհարաբերությունները պետական իշխանության մյուս մարմինների հետ՝ համահունչ հակակշիռների և փոխզույգումների սահմանադրական մեխանիզմին:

Պետք է նշենք, որ Սահմանադրության հինգերորդ գլուխը ներառում է ԱԾ-ի կազմավորման կարգի միայն ընդհանուր դրույթները, քանի որ մի շարք առանցքային հարցերի կանոնակարգման վերաբերյալ Սահմանադրության հ. 106-ը և 107-ը հղումներ են կատարում մի շարք այնպիսի օրենքների, ինչպիսիք են ԱՀ ընտրական օրենսգիրքը, ԱԾ-ի կանոնակարգ օրենքը և այլն:

ԱՀ Սահմանադրության հ. 106-ը և ՀՀ Սահմանադրության հ. 88-ը ուղղակի հոշակում են, որ օրենսդիր իշխանությունը իրականացնում է ԱԾ-ն: Հարկ է նշել, որ 2006թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Սահմանադրության մեջ որևէ նշում չկար ԱԾ-ի ներկայացուցչական մարմնի բնույթի մասին: Նոր Սահմանադրության հ. 106-ի առաջին կետը ամրագրում է, որ ԱԾ-ը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Սակայն այստեղ տեղին է ընդգծել, որ ներկայացուցչությունը իրենից ենթադրում է ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով լեգիտիմորեն համապատասխան մանդատ ստանալը և ընտրողների կամքն ու շահերը ներկայացնելը: Ուստի տվյալ դեպքում նման բնորոշումը միանգամայն արդարացված և տրամաբանական է, քանի որ ԱՀ ԱԾ-ի պատգամավորները ընտրվում են բնակչության կողմից՝ իսկ տվյալ դեպքում որպես կարևոր նախապայման կարող են հանդես գալ միմիայն լեգիտիմ (արդար, թափանցիկ) ընտրությունները: Այստեղ տեղին է կիսել արտասահմանյան մի շարք ակնավոր պետականագետների կարծիքը առ այն, որ ընտրությունների ճանապարհով պառլամենտի ձևավորումը դեռևս բավարար չէ նրան որպես ներկայացուցչական մարմին բնորոշելու համար, քանի որ նախ և առաջ անհրաժեշտ է, որ ընտրությունները լինեն լեգիտիմ, ինչը պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: [4, էջ 189] Վերոնշյալից տրամաբանորեն հետևում է, որ միայն լեգիտիմ ընտրությունների ճանապարհով իրականում կարելի է ապահովել օրենսդիր մարմնի ներկայացուցչական բնույթը և ընտրված պատգամավորները պետական ու հասարակական կյանքի առաջնային խնդիրները լուծելիս կներկայացնեն իրենց ընտրողների կամքն ու շահերը: Օրենսդիր իշխանության

իրականացումը վերապահելով ԱԺ-ին՝ ԱՀ և ՀՀ Սահմանադրությունը դրանով իսկ ամրագրում է մի կարևոր սկզբունք, համաձայն որի ԱՀ-ում և ՀՀ-ում ոչ մի օրենք չի կարող ընդունվել, եթե այն չի քննարկվել ԱԺ-ի կողմից կամ չի արժանացել վերջինիս հավանությանը:

ԱՀ և ՀՀ Սահմանադրությունները ԱԺ-ի և պետական իշխանության մյուս ընտրովի մարմինների կազմավորման համար, որպես արմատական սկզբունքներ վկայակոչում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքները, որոնք իրականացվում են գաղտնի քվեարկության միջոցով:

ԱՀ Սահմանադրության հ. 48-ի երրորդ կետի համաձայն ԱԺ-ի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Արցախի քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Արցախում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: [1, էջ 45] Նշենք, որ ԱՀ 2006թ. Սահմանադրությունը ԱԺ պատգամավորի տարիքը սահմանում էր քսաներեք տարեկանը: ՀՀ Սահմանադրությունը ևս պատգամավորի նվազագույն տարիքը սահմանում է քսանհինգ տարեկանը: Այդուհանդերձ, տարբեր աղբյուրների վերլուծությունը ցույց է տվել, որ ԱՀ և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ պատգամավորի առավելագույն տարիքը: Այս հարցը մինչև հիմա ո՛չ առաջադրվել է, ոչ էլ ստացել իր պատասխանը: Ուստի նպատակահարմար է հաշվի առնել այս հանգամանքը պատգամավորի իրավական կարգավիճակի հիմնահարցերը քննարկելիս:

ԱՀ ԱԺ-ը բաղկացած է ոչ պակաս, քան քսանյոթ և ոչ ավել, քան երեսուներեք պատգամավորից, իսկ ՀՀ Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից, որոնք ընտրվում են համամասնական ընտրակարգով: Դա միանգամայն արդարացված է, քանի որ օրենսդիր մարմնի ձևավորումը կուսակցության հիմքի վրա, անշուշտ, կնպաստի մի կողմից քաղաքական որոշումների կայացման արդյունավետությանը, իսկ մյուս կողմից՝ կուսակցությունների կայունացմանն ու ամրապնդմանը: Վերոնշյալը ունի նաև իր բացասական կողմերը, քանի որ կասկածի տակ է դնում պատգամավորական մանդատի ազատությունը: Եթե ԱԺ-ի պատգամավորները ընտրվում են համամասնական ընտրակարգով, այսինքն կուսակցական ցուցակներով և տրամաբանական է, որ միևնույն խմբակցության կամ պատգամավորական խմբերում ընդգրկված պատգամավորները կաշկանդված են տվյալ կուսակցության կամ խմբի ցուցումներով ու հանձնարարություններով, ապա այս պարագայում կարելի է խոսել միայն հարաբերական ազատության մասին:

Հաշվի առնելով համաշխարհային փորձը՝ ԱՀ ընտրական օրենսդրությունը ևս պահանջում է, որպեսզի ինչ-որ չափով ապահովվի գենդերային հավասարակշռությունը: Հենց դա է վկայում ԱՀ ընտրական օրենսգրքում ամրագրված դրույթը, համաձայն որի համամասնական ընտրակարգով ներկայացված կուսակցության (կուսակցության դաշինքի) ընտրական ցուցակի առնվազն քսան տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին:

ԱԺ աշխատանքների կազմակերպման բնականոն գործունեությունը ապահովում է ԱԺ նախագահը, որը իրավասու է վարել ԱԺ նիստերը, տնօրինել ԱԺ նյութական միջոցները և իրականացնել օրենսդրությամբ վերապահված այլ լիազորություններ: Պետք է ընդգծենք, որ ի տարբերություն որոշ արտասահմանյան երկրների, ԱՀ ԱԺ նախագահ է ընտրում իր լիազորությունների ամբողջ ժամկետով՝ հինգ տարի ժամկետով: Օրինակ մի շարք պետություններում (Դանիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Շվեդիա և այլն) նախագահներն ընտրվում են միայն մեկ նստաշրջանի համար: [5, էջ 118] ԱՀ ԱԺ նախագահը ներկայացնում է ԱԺ ինչպես երկրի ներսում՝ այսինքն պետական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում, այնպես էլ արտաքին հարաբերություններում:

ԱՀ Սահմանադրությամբ ամրագրված ԱԺ իրավասության տրամաբանական ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է ընձեռնում առանձնացնել նրա գործունեության որոշակի ուղղություններ, որոնք հիմնականում վերաբերում են ա) օրենսդրության, բ) ֆինանսների, գ) արտաքին հարաբերությունների, դ) պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտներին: Տվյալ դեպքում առանձնակի կարևորվում են նաև պետական մարմինների ձևավորման ոլորտի լիազորությունները, որոնք իրենց հերթին դրսևորվում են երկու հիմնական եղանակով՝ ա) պաշտոնատար անձանց նշանակմամբ և բ) ընտրությամբ:

Օրենսդրության ոլորտում ԱԺ-ն օժտված է բավականին լայն իրավասություններով: ԱԺ-ում պատգամավորի կարգավիճակի առանցքն է կազմում նրա օրենսդրական նախաձեռնության իրավունքը: Օրենսդրական նախաձեռնությունը բավականին լուրջ և պատասխանատու ընթացակարգ է և պատահական չէ, որ ԱՀ Սահմանադրությունն այդ իրավունքը վերապահել է սահմանափակ թվով սուբյեկտների՝ Հանրապետության նախագահին, պատգամավորներին և ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն երկուսուկես տոկոսին՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով (ԱՀ Սահմանադրություն հ. 122): Որպես կանոն օրինագծերի նախապատրաստումը պահանջում է բարձր արհեստավարժություն, օրինաստեղծ սուբյեկտների փոխհամաձայնեցված գործունեություն և մեծ պատասխանատվություն, նամանավանդ կարևոր օրինագծերի մշակման աշխատանքների նկատմամբ: Ըստ էության նման խնդրի իրականացումը անշուշտ հնարավոր է միայն սահմանափակ թվով սուբյեկտների օրինաստեղծ գործունեության դեպքում, որի արդյունքում միայն կարելի է ակնկալել առավել որակյալ օրենքների ընդունումը:

Ֆինանսների ոլորտում ԱՀ ԱԺ իրավասությունները առաջին հերթին արտահայտվում են պետության եկամուտների ու ծախսերի հաստատման, ինչպես նաև հարկերի սահմանման հարցում իրացվող լիազորության մեջ: Չնայած նշված լիազորությունը իրացվում է որպես կանոն բյուջեի մասին օրենք ընդունելու ձևով, այնուամենայնիվ այն ըստ էության ներկայացնում է պառլամենտական իրավասության յուրահատուկ մասը: Համաձայն ԱՀ Սահմանադրության հ. 123-ի՝ ԱԺ-ն նախագահի ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Նախագահը պետական բյուջեի նախագիծը ԱԺ է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն քառասունհինգ օր առաջ: Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը: Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Այդ ժամկետում չընդունվելու դեպքում մինչև պետական բյուջեի ընդունումը ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: [1, էջ 89]

ՀՀ Սահմանադրության հ. 110-ի համաձայն՝ ԱԺ-ն պետական բյուջեն ընդունում է կառավարության ներկայացմամբ: Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն ԱԺ է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուս օր առաջ:

ԱՀ ԱԺ-ն՝ օժտված է որոշակի լիազորություններով նաև արտաքին հարաբերությունների բնագավառում: Որպես կանոն արտաքին հարաբերությունների ոլորտում ԱԺ լիազորությունները ամրագրված են Սահմանադրության հ. 128-ով, համաձայն որի ԱԺ-ն վավերացնում, կասեցնում կամ դադարեցնում է ԱՀ միջազգային պայմանագրերը: Միջազգային պայմանագրերի շրջանակը սահմանված է համապատասխան օրենքով: [1, էջ 92] Միջազգային պայմանագրերի վավերացում նշանակում է, որ պետությունը վերջնականապես համաձայնում է կնքելու սահմանված ձևի պայմանագիր: Պայմանականորեն միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու բացառիկ իրավունքը վերապահված է պետության գլխին: Սակայն ժամանակի ընթացքում միջազգային պայմանագրերը սկսեցին աստիճանաբար ավելի խորը ներթափանցել պետությունների ներպետական իրավական համակարգ՝ դառնալով ոչ միայն վերջիններիս անբաժան մասը, այլև ստիպելով փոփոխություններ մտցնել ներպետական օրենսդրության մեջ: Նույնիսկ վերջին ժամանակներս համաշխարհային իրավական փորձը վկայում է միջազգային նորմերի գերակայության հաստատումը ներպետական օրենսդրության նկատմամբ: Նշված սկզբունքը իր օրենսդրական ամրագրումն է ստացել նաև ԱՀ Սահմանադրության մեջ, որի հ. 5-ի 3 մասը հռչակում է, որ ԱՀ միջազգային պայմանագրերը ԱՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ԱԺ պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտի լիազորություններից առավել կարևորվում է պատերազմ հայտարարելու իրավունքը: Համաձայն ԱՀ Սահմանադրության հ. 130-ի առաջին կետի՝ ԱԺ-ն հանրապետության նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Նշված հիմնահարցի հետ սերտորեն առնչվում է ևս մեկ կարևոր հանգամանք: Հատկանշական է, որ հին Սահմանադրությունները (օրինակ ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան) ամրագրում էին պառլամենտի՝ պատերազմ հայտարարելու իրավունքը, մինչդեռ ժամանակակից Սահմանադրությունները, որոնք ընդունվել են միջազգային իրավունքի զարգացման փուլում (ազրեսիվ պատերազմներ վարելու անընդունելիությունը) հիշատակում են պատերազմական դրություն հայտարարելու իրավունքի մասին (Կոլումբիա, Իտալիա, Հունգարիա և այլն): [5, էջ 118] «Պատերազմական դրություն» տերմինը

ավելի արդարացի է, քանի որ այն մեկնաբանվում է որպես պետության կողմից պաշտպանվելու միջոց՝ նրա վրա զինված հարձակման դեպքում: Այս կապակցությամբ հարկ է ավելացնել, որ ԱՀ նոր Սահմանադրության մեջ կիրառվում է «ռազմական դրություն» տերմինը:

ԱՀ ԱԺ լիազորությունները պետական մարմինների ձևավորման, պաշտոնատար անձանց նշանակման կամ ընտրության ոլորտում բազմաբովանդակ են, որը պայմանավորված է տարբեր պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց նշանակմանը կամ ընտրությանը ԱԺ մասնակցության ձևերի ու մեթոդների առանձնահատկություններով: ԱՀ ԱԺ լիազորությունները պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց նշանակման ոլորտում սպառնիչ թվարկված են ԱՀ ԱԺ կանոնակարգ օրենքում, համաձայն որի ԱԺ-ն նշանակում է՝

- Գերագույն դատարանի նախագահին և մյուս դատավորներին,
- Գլխավոր դատախազին,
- Հաշվեքննիչ պալատի նախագահին,
- Մարդու իրավունքների պաշտպանին,
- Արդարադատության խորհրդի երկու իրավաբան անդամներին:

ԱԺ-ն այլ պետական մարմինների գործունեության նկատմամբ իր վերահսկողական գործառնությունը իրականացնում է հաշվեքննիչ պալատի միջոցով: Որոշ պետություններում հաշվեքննիչ պալատը գործում է ԱԺ կազմում և լիովին ձևավորվում է վերջինիս կողմից: Արցախում հաշվեքննիչ պալատը առանձնացված կառույց է, որը հսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների, օտարերկրյա պետություններից ու միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների ու վարկերի, պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Պետք է նշել, որ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է ԱԺ-ն:

Պատգամավորը պետական իշխանության ներկայացուցչական, օրենսդիր մարմնի անդամն է: Այդ պատճառով վերջինիս աշխատանքի հաջողությունը և արդյունավետությունը մեծ չափով կախված են նրանից, թե ովքեր են ընտրվում պատգամավոր և որքան ակտիվ են նրանք մասնակցում խորհրդարանի աշխատանքներին: Պետք է ընդգծենք, որ պատգամավորների կարգավիճակը, ըստ էության, պայմանավորված է ԱՀ պառլամենտում աշխատելու հանգամանքով, որի ուժով՝ ա) պատգամավորը հանդիսանում է հանրապետության ժողովրդի ներկայացուցիչը ԱԺ-ում, բ) նա օժտված է ազատ մանդատով, գ) Սահմանադրությամբ նրա մանդատը համարվում է անհամատեղելի պետական իշխանության այլ մարմիններում պաշտոն զբաղեցնելու հետ:

ԱՀ Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը ունի երկակի բնույթ: Նա մի կողմից հանդես է գալիս որպես իր ընտրատարածքի բնակչության ներկայացուցիչ Ազգային ժողովում, մյուս կողմից՝ Ազգային ժողովի ներկայացուցիչն է տվյալ ընտրատարածքում: Այդ պատճառով էլ, մասնակցելով օրենսդիր մարմնի կողմից պետական, տնտեսական, սոցիալական և մշակութային շինարարության առավել կարևոր հարցերի լուծմանը, պատգամավորը պարտավոր է ղեկավարվել համապատասխան շահերով՝ միաժամանակ հաշվի առնելով ընտրատարածքի բնակչության պահանջներն ու շահերը:

Պատգամավորի գործունեությունը բնակչության շրջանում հանդիսանում է ներկայացուցչական օրենսդիր մարմնի աշխատանքի կազմակերպման բովանդակային կողմ: Խնդրի էությունը կայանում է նրանում, որ օրենսդիրներից յուրաքանչյուրը, հանդիպելով իր ընտրողների հետ, լսելով նրանց կարծիքները, առաջարկություններն ու գանգատները՝ ինչպես ընտրատարածքի սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ հարցերի, այնպես էլ ողջ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին, ամփոփում է այն և ներկայացնում օրենսդիր մարմին: Օրինակ, եթե նման ամփոփումներից պարզվում է, որ առողջապահության կամ կրթության ոլորտում իրավիճակը ոչ այնքան բարվոք է կամ կան զգալի թերություններ, ապա պառլամենտը կարող է ձեռնամուխ լինել նշված բնագավառում համապատասխան օրենքի ընդունմանը: Պետք է ընդգծենք, որ այդպիսի ճանապարհով ընդունված օրենքը կարող է դառնալ իրավական, որովհետև ընդունվում է սոցիալական արդարության, ժողովրդի մեծամասնության կամահայտնության հիման վրա: [3, էջ 23]

Ազգային ժողովի աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը նստաշրջանն է: Նստաշրջանում քննարկվում են նրա իրավասության մեջ մտնող առավել կարևոր հարցերը: Դրա համար էլ նստաշրջանին մասնակցելը յուրաքանչյուր պատգամավորի պարտականությունն է:

Որպես Ազգային ժողովի ներկայացուցիչ ընտրատարածքում պատգամավորը կարող է մշտական կապ պահպանել իր ընտրողների հետ, նրանց պարբերաբար տեղեկություններ հաղորդել խորհրդարանում քննարկվող հարցերի, դրանց քննարկմանն իր մասնակցության, ընդունված իրավական ակտերի մասին, կատարել ընտրողների ընդունելություն և այլն: Դրա համար օրենսդրությունը սահմանում է մի շարք երաշխիքներ, ինչպիսիք են՝ կազմակերպական, տնտեսական և իրավական երաշխիքները: Այժմ պարզաբանենք դրանք առանձին-առանձին:

Այն պայմանները, որոնք կոչված են ապահովելու պատգամավորի անխափան աշխատանքը, կոչվում են կազմակերպչական երաշխիքներ: Այսպես, պատգամավորն իրավունք ունի պատգամավորական հարցումներով դիմելու պետական և հասարակական բոլոր մարմիններին, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, ովքեր պարտավոր են անհապաղ ընդունել նրան և պատասխանել առաջադրված հարցերին:

Բացի այդ պատգամավորը որպես պետական իշխանության ներկայացուցիչ, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի խախտումներ բացահայտելու դեպքում իրավունք ունի պահանջելու տեղում անհապաղ շտկել այդ խախտումները: Անհրաժեշտության դեպքում պատգամավորն այդ հարցով կարող է դիմել համապատասխան պաշտոնատար անձանց, ովքեր պարտավոր են անհապաղ միջոցներ ձեռնարկել իրավախախտումը կանխելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Տնտեսական երաշխիքներ են համարվում այն պայմանները, որոնք կոչված են ապահովելու պատգամավորի նյութական և աշխատանքային իրավունքները պատգամավորական գործունեության ընթացքում: Այսպես, Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված է, որ պատգամավորը հանրապետության տարածքում կապ հաստատելու համար իրավունք ունի օգտվել տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող կապի միջոցներից:

Իրավական երաշխիք է համարվում պատգամավորի անձեռնմխելիության իրավունքը: Դա նշանակում է, որ պատգամավորը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, կալանավորվել կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվել առանց ԱԺ համաձայնության: ԱՀ Սահմանադրության հ. 112-ի և ՀՀ Սահմանադրության հ. 96-ի համաձայն՝ պատգամավորը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում նաև Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն գրապարտություն կամ վիրավորանք չի պարունակում: [1, էջ 82]

Պատգամավորական անձեռնմխելիությունը ըստ էության սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված պաշտպանական միջոցներ են, որոնք նպատակ ունեն գերծ պահել ժողովրդի ընտրյալների շահերն ու իրավունքները այլոց ոտնձգություններից:

Այսպիսով, ԱՀ Սահմանադրության և ԱԺ կանոնակարգ օրենքի տրամաբանական վերլուծությունը հանգեցնում է այն եզրահանգմանը, որ ԱՀ օրենսդրությամբ նախատեսված են բավականին օբյեկտիվ նախադրյալներ ԱԺ-ի կողմից իր լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման համար, որի գործնական կիրառումն ու ապահովումը անշուշտ կնպաստի ոչ միայն օրենսդիր իշխանության դերի և հեղինակության բարձրացմանը, այլ նաև արտաքին հարաբերություններում ԱՀ վարկանիշի բարձրացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՀ Սահմանադրություն, 2017
2. ԱՀ ԱԺ կանոնակարգ, 2017
3. Խաչատրյան Հ. Մ. Պառլամենտը և պատգամավորը, Երևան 1994
4. Мишин А. А. Принцип разделения властей, М., 1976.
5. Мишин А. А. Парламенты мира, М., 1991.
6. Хачатрян Г. М. Правотворчество – занятия дел профессионалов, М., 1991.

**РЕЗЮМЕ**  
**Статус депутата в НС Республики Арцах**  
**Марианна Арзуманян**

**Ключевые слова:** Республика Арцах, Конституция, Национальное собрание, парламентаризм, законодательная власть, депутат, демократия, сессия, законодательная инициатива.

В статье рассматривается вопрос о Национальном собрании Республики Арцах в качестве представительного законодательного органа, его структура, порядок формирования и полномочия. Особое внимание было уделено правовым требованиям статуса депутата. Были представлены гарантии депутатской деятельности. Подчеркивается законодательная инициатива как ось парламентского статуса. Также были изучены институты парламентов ряда стран с проведением соответствующих параллелей.

**SUMMARY**  
**The status of a Deputy in the National Assembly of the Republic of Artsakh**  
**Marianna Arzumanyan**

**Key words:** The Republic of Artsakh, Constitution, National assembly, parliamentarism, legislative body, deputy, democracy, session, legislative initiative.

The article considers the issue of the National Assembly of the Republic of Artsakh as a representative and legislative body, its structure, the order of formation and powers. Attention was paid to legal requirements of the deputy status. Guarantees of deputy activity were presented. The legislative initiative is underlined as an axis of parliamentary status. We have also studied institutes of the parliament of a number of countries and drawn appropriate parallels.